

## ՀԵՌՈՒՍՏՍԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

### 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2014 թվականին Հայաստանի Հանրապետությունում գործել են 98 հեռուստաընկերություն (44-ը՝ վերգետնյա եթերային, 54-ը՝ կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող) և 20 ռադիոընկերություն:

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականին հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման 7 լիցենզիա է հատկացրել. «ՊՐՈՐԴԻԶԱՅՆ» ՍՊ ընկերությանը՝ Լոռու և Կոտայքի մարզերում, «ՆՈՐ ՆՈՐՔ ԿԱԲԵԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՍՊ ընկերությանը՝ Երևան քաղաքում, Արարատի և Կոտայքի մարզերում, «ՖԼԱՅ ՏՎ» ՍՊ ընկերությանը՝ Գյումրի քաղաքում, «ՍԱՄՎԵԼ-ՄԵԼԻՆԵ» և «ՄՄԱՅԼ ՄԻՍԵՄՍ» ՍՊ ընկերություններին՝ Կոտայքի մարզում, «ԽՈՒՍՏՈՒՓ ԹՎԻ» ՍՊ ընկերությանը՝ Կապան քաղաքում, «ԱՐՓԻՆԵՏ» ՍՊ ընկերությանը՝ Արմավիրի, Արագածոտնի և Շիրակի մարզերում հեռարձակման համար (Հավելված 1): Հաշվետու ժամանակահատվածում հեռուստածրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստանալու դիմումներ չեն մերժվել:

Լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին դիմումների հիման վրա ուժը կորցրած է ճանաչվել հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման 5 լիցենզիա (Հավելված 2):

Անալոգային հեռարձակումից թվային հեռարձակման անցնելու գործընթացի շրջանակում հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման համար նախատեսված հաճախականությունների ցանկում կատարվել են համապատասխան փոփոխությունները.

1. «ՊԱՐԱԴԻԶ» ՍՊ ընկերությանը հեռուստածրագրերի («ԿՈՒԼՏՈՒՐԱ» (Культура) ՀԾ) եթերային հեռարձակում իրականացնելու համար Երևան քաղաքի տարածքում հատկացված 23-րդ կապուղին փոխարինվել է 21-րդ կապուղով.

2. «ՆՈՐ ԴԱՐ, ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄՅԱԿ» ՍՊ ընկերությանը հեռուստածրագրերի եթերային հեռարձակում իրականացնելու համար Արմավիրի մարզի տարածքում հատկացված 35-րդ կապուղին փոխարինվել է 47-րդ կապուղով:

Միաժամանակ, կողմնակի ներթափանցումների հետևանքով հաճախականությունների տևական խանգարումների առկայությամբ պայմանավորված

հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման համար նախատեսված հաճախականությունների ցանկում կատարվել են փոփոխություններ (Հավելված 3):

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 2013 թվականի հունիսի 19-ի ՀՕ-70-Ն օրենքի ընդունմամբ պայմանավորված 2014 թվականին Հանձնաժողով է ներկայացվել և բավարարվել լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման 14 հայտ, որի արդյունքում մարզային անալոգային հեռուստաընկերությունների լիցենզիաների գործողության ժամկետները երկարաձգվել են մինչև 2015 թվականի հուլիսի 1-ը (Հավելված 4): Մարզային անալոգային հեռուստաընկերություններից «ԼԱՍՏԻ ԽՈՒՏ» ՍՊ ընկերության լիցենզիան իր դիմումի համաձայն 2015 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած է ճանաչվել, իսկ «ԼՈՒՍԱԼԻՔ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊ և «ՈՐՈՏԱՆՅԱՆ ՂՈՂԱՆՋՆԵՐ» ՍՊ ընկերությունները լիցենզիաների գործողության ժամկետի երկարաձգման հայտեր չեն ներկայացրել և լիցենզիաների ժամկետը լրանալու հիմքով ուժը կորցրել են 2015 թվականի հունվարի 1-ից:

Հաշվետու ժամանակահատվածում ներկայացված հայտերի հիման վրա տրամադրվել է լիցենզիայի կրկնօրինակ «ՄԻՐԱԿ» ՍՊ ընկերությանը և վերաձևակերպվել 3 լիցենզիա՝ անվանման և գտնվելու վայրի փոփոխության հիմքով «ԵՐԵՎԱՆ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» (այսուհետ՝ «Հ3» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ») ՓԲ և «ԶԱՊ» (այսուհետ՝ «ԶԱՊ ՔԵՄԻՔԼ») ՍՊ ընկերությունների, ինչպես նաև գտնվելու վայրի փոփոխության հիմքով «ԱՐԶԱԳԱՆՔ ՍՏ.» ՍՊ ընկերության:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման համար նախատեսված հաճախությունների ամբողջական ցանկը հրապարակվել է Հանձնաժողովի <http://www.tvradio.am> պաշտոնական ինտերնետային կայքում:

Կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող ընկերություններին ոչ սեփական հեռուստառադիոհաղորդումների վերահեռարձակման թույլտվություն տալու գործառույթի շրջանակում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են ավելի քան 250 հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթեր՝ պայմանագրեր, համաձայնագրեր, որի արդյունքում կայացվել է շուրջ 49 վերահեռարձակման թույլտվություն տալու մասին որոշում:

Արդյունքում՝ Հանձնաժողովի կողմից հասկացված լիցենզիաների հիման վրա 2014 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ գործել են 94 հեռուստաընկերություն, որից 40-ը՝ վերգետնյա եթերային (Հավելված 4), 54-ը՝ կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող (Հավելված 5):

Վերգետնյա եթերային 40 հեռուստաընկերություններից 6-ը հանրապետական սփուման են, որից 1-ն իրականացրել է վերահեռարձակում, 9-ը մայրաքաղաքային սփուման են, ներառյալ 3 վերահեռարձակում իրականացնող հեռուստաընկերություն, 25<sup>1</sup>-ը տարածքային սփուման են:

Բացի վերը նշվածից Հայաստանի Հանրապետությունում գործել են նաև «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ, «ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ, «ՇԻՐԱԿԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ» ՓԲ ընկերությունները, միջպետական պայմանագրի հիման վրա հեռարձակվել է «ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի մասնաճյուղի հեռուստածրագիրը:

Կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող 54 հեռուստաընկերություններից 7-ը գործել է Երևան քաղաքում և մեկ կամ մի քանի մարզերում, 15-ը՝ Երևան քաղաքում, 2-ը՝ մեկից ավելի մարզերում, 30-ը՝ մեկ մարզի տարածքում:

2014 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում գործել է 20 ռադիոընկերություն (Հավելված 6), որից 3-ը՝ Երևան քաղաքում և միաժամանակ մեկ կամ մի քանի մարզերում, 14-ը՝ Երևան քաղաքի տարածքում, 3-ը՝ մեկ մարզի տարածքում:

Հանձնաժողովի կարգավորման ոլորտում գործող ընկերությունները հաշվետու ժամանակահատվածում ապահովել են ՀՀ պետական բյուջեի զգալի մուտքեր՝ հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման համար տարեկան պետական տուրքի, դրա չվճարված գումարի նկատմամբ հաշվարկված տույժի, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, «կրկնօրինակ» տրամադրելու համար գանձված գումարների հաշվին: 2014 թվականին նշված աղբյուրներից ՀՀ պետական բյուջե փոխանցված գումարը կազմել է շուրջ 188 մլն ՀՀ դրամ, այդ թվում՝ ավելի քան 2 մլն ՀՀ դրամ տույժ:

<sup>1</sup> Նշված 25 տարածքային սփուման հեռուստաընկերություններից՝ մարզային անալոգային հեռարձակում իրականացնող «ԼՈՒՍԱԼԻՔ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊ, «ԼԱՍՏԻ ԽՈՒՏ» ՍՊ և «ՈՐՈՏԱՆՅԱՆ ՂՈՂԱՆՋՆԵՐ» ՍՊ ընկերությունները գործել են մինչև 2015 թվականի հունվարի 1-ը:

2014 թվականի ընթացքում Հանձնաժողովն իր վերահսկողական գործառնությունները իրականացնելու նպատակով կատարել է հանրապետական և մայրաքաղաքային սփռում իրականացնող հեռուստատաղիորնկերությունների ծրագրերի 2100 և տարածքային սփռում իրականացնող հեռուստատաղիորնկերությունների ծրագրերի 1860 օրերի ուղղակի դիտարկումներ:

Հանձնաժողովը ստացել և ուսումնասիրել է հեռուստատաղիորնկերությունների հաշվառման մատյանների տվյալները, վարել է դրանց տեղեկատվական բազան, իրականացրել է իր ուղղակի դիտարկումների և ընկերությունների կողմից տրամադրվող տեղեկատվության համադրում, ինչպես նաև հեռուստատաղիորնկերությունների հեռարձակման օրինականությունը հավաստող փաստաթղթերի ուսումնասիրություն:

Հանձնաժողովի 2014 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 73-Ա որոշմամբ «Տավուշ-ՏՎ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ գրավոր նախազգուշացում:

2014 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերի դեմ դատական վարույթներ չեն հարուցվել և Հանձնաժողովի գործունեության հետ կապված դիմում-բողոքներ չեն ներկայացվել:

2014 թվականին Հանձնաժողովը մասնակցել է Կարգավորող մարմինների եվրոպական պլատֆորմի (EPRA) 39-րդ (գարնանային) և 40-րդ (աշնանային) նստաշրջաններին, Հեռահաղորդակցության միջազգային ինստիտուտի (IIC) կողմից կազմակերպված Կարգավորող մարմինների միջազգային ֆորումին: Հանձնաժողովը մասնակցել է նաև Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի գրասենյակի կողմից կազմակերպված հարավ - կովկասյան 11-րդ մեդիա-համաժողովին՝ «Հանրային հեռարձակումը թվային դարաշրջանում» խորագրով:

Հանձնաժողովը համագործակցել է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ՝ նաև ԼՂՀ Հանձնաժողով) հետ: Հաշվի առնելով հեռուստատեսության և ռադիոյի որպես զանգվածային լրատվության միջոցների դերը հասարակության մշակութային, կրթական, սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական տեղեկատվության մատչելիության գործում, ինչպես նաև Լեոնային Ղարաբաղի Հանրապետության ինտեգրումը միջազգային կառույցներում և հանձնաժողովների միջև համագործակցության ամրապնդումը, 2014 թվականի հուլիսին տեղի ունեցած համատեղ նիստի ժամանակ Հանձնաժողովի և ԼՂՀ Հանձնաժողովի միջև

կնքվել է համագործակցության համաձայնագիր: Բացի այդ, Հանձնաժողովի և ԼՂՀ Հանձնաժողովի կողմից 2014 թվականի հոկտեմբերին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում կազմակերպվել է համաժողով՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության հեռուստատառադիոընկերությունների համագործակցության ամրապնդման և ոլորտի հետագա զարգացման ուղիները» թեմայով: Համաժողովին մասնակցել են Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների ներկայացուցիչներ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն կատարած այցերի ժամանակ Հանձնաժողովը կազմակերպել է նաև այցեր զինվորական գորամասեր և մարտական դիրքեր ու հանդիպել ժամկետային զինծառայողների հետ:

Հանձնաժողովը համագործակցել է օտարերկրյա պետություններում հեռուստատեսության և ռադիոյի ոլորտը կարգավորող մարմինների հետ: Մասնավորապես, քննարկումներ են կազմակերպվել Հանձնաժողովի և Իտալիայի Հանրապետության, Բուլղարիայի Հանրապետության, Չեխիայի Հանրապետության, Իրանի Իսլամական Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության համապատասխան կառույցների հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հեռուստատառադիոհեռարձակման ոլորտում օրենսդրության արդյունավետ կարգավորման և այլ լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ է փորձի, տեղեկատվության և մշտական խորհրդատվության փոխանակում և հիմնվելով փոխադարձ հարգանքի, վստահության և գործընկերության սկզբունքներին, Հանձնաժողովը համագործակցության համաձայնագրեր է կնքել Չեխիայի Հանրապետության, Իրանի Իսլամական Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ոլորտը կարգավորող մարմինների հետ:

Հանձնաժողովի և Իրանի Իսլամական Հանրապետության կարգավորող մարմնի միջև համագործակցության շրջանակներում, 2014 թվականի փետրվարին Հանձնաժողովի և հայաստանյան առաջատար մի շարք հեռուստաընկերությունների ներկայացուցիչներ Թեհրան քաղաքում հանդիպել են Իրանի Իսլամական Հանրապետության կարգավորող մարմնի և իրանական հեռուստաընկերությունների ղեկավարների հետ: Այս այցի նպատակն է եղել ամրապնդել երկու

երկրների համանման կառույցների և հեռուստաընկերությունների միջև հարաբերությունները, բացահայտել փոխգործակցության նոր ուղիներ:

Հանձնաժողովը համագործակցել է հայաստանյան հասարակական և միջազգային միջառն կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում գործող դիվանագիտական ներկայացուցիչների հետ:

Հանձնաժողովն իրականացրել է իր գործունեության հետ առնչվող հարցերի լուսաբանումը հասարակայնության և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների համար, ինչպես նաև նորությունների մասին տեղեկատվության տեղադրումը Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

2014 թվականի ընթացքում Հանձնաժողովը գումարել է 28 նիստ, որում ընդունվել է 85 անհատական որոշում:

Հանձնաժողով մուտքագրվել է 437 գրություն, ՀՀ քաղաքացիներից և կազմակերպություններից՝ 13 դիմում-բողոք (հեռուստաընկերությունների հաղորդումների անորակ լինելու, լեզվի անաղարտության, անբարեխիղճ գովազդ հեռարձակելու մասին և այլն), որոնց պատասխանվել է համաձայն գործող օրենսդրական ակտերին:

2014 թվականին Հանձնաժողովն իր դիրքորոշումը հայտնել է ՀՀ օրենքների, որոշումների, միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի 22 նախագծերին:

2014 թվականի ընթացքում Հանձնաժողովի աշխատակազմը անցկացրել է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների համար 3 մրցույթ: 4 քաղաքացիական ծառայողներ ատեստավորվել են և 10 քաղաքացիական ծառայողներ վերապատրաստվել են:

**2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՏՐԱԳՐԵՐԻ ԿԱԲԵԼԱՅԻՆ  
 (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ**

h/h	Ընկերության անվանումը	Սփռման տարածքը	Որոշման ամսաթիվը, համարը	Լիցենզիայի համարը, տրման ամսաթիվը
1	«ՊՐՈՂԻԶԱՅՆ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ, ՀՀ Կոտայքի մարզ	ՀՌԱՀ 13.12.2013թ. թիվ 81-Ա որոշում	N 194 10.01.2014թ.
2	«ՆՈՐ ՆՈՐՔ ԿԱԲԵԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Արարատի մարզ, Կոտայքի մարզ	ՀՌԱՀ 10.04.2014թ. թիվ 7-Ա որոշում	N 195 14.04.2014թ.
3	«ՖԼԱՅ ՏՎ» ՍՊԸ	ք. Գյումրի	ՀՌԱՀ 29.05.2014թ. թիվ 11-Ա որոշում	N 196 31.05.2014թ.
4	«ՍԱՄՎԵԼ-ՄԵԼԻՆԵ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ՀՌԱՀ 15.08.2014թ. թիվ 48-Ա որոշում	N 197 19.08.2014թ.
5	«ՍՄԱՅԼ ՍԻՍԵՄՍ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	ՀՌԱՀ 28.08.2014թ. թիվ 57-Ա որոշում	N 198 05.09.2014թ.
6	«ԽՈՒՍՏՈՒՓ ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Կապան	ՀՌԱՀ 06.10.2014թ. թիվ 60-Ա որոշում	N 199 08.10.2014թ.
7	«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Արմավիրի, Արագածոտնի և Շիրակի մարզեր	ՀՌԱՀ 19.12.2014թ. թիվ 79-Ա որոշում	N 200 24.12.2014թ.

**2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՂԱԲԵՑՎԱԾ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՐԱԳՐԵՐԻ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ**

h/h	Ընկերության անվանումը	Սփռման տարածքը	Որոշման ամսաթիվը, համարը
1	«ՆՈՐ ՆՈՐՔ ԿԱԲԵԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Երևան	ՀՌԱՀ 10.04.2014թ. թիվ 7-Ա որոշում
2	«ՄՄՏ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ք. Գյումրի	ՀՌԱՀ 29.07.2014թ. թիվ 31-Ա որոշում
3	«ՍԱՄՎԵԼ-ՄԵԼԻՆԵ» ՍՊԸ	ք. Աբովյան	ՀՌԱՀ 15.08.2014թ. թիվ 48-Ա որոշում
4	«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Արմավիրի մարզ	ՀՌԱՀ 19.12.2014թ. թիվ 79-Ա որոշում
5	«ՄԵԴԱԼՍԱՆ» ՍՊԸ	ք. Բյուրեղավան	ՀՌԱՀ 26.12.2014թ. թիվ 85-Ա որոշում

**2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՂԱՂՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ  
 ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

h/h	Ընկերության անվանումը	Սփռման տարածքը	Հատկացված հաճախականու թյունը	Փոխարինված հաճախականու թյունը
<b>Ռադիոհաղորդումների հեռարձակում</b>				
1	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ	ք. Երևան	102.0 ՄՀց	101.9 ՄՀց
		գ. Ֆանտան	104.4 ՄՀց	104.5 ՄՀց
2	«ԱՎՏՈՌԱԴԻՈ»ՍՊԸ	ք. Երևան	89.8 ՄՀց	89.7 ՄՀց
3	«ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ	ք. Երևան	107.0 ՄՀց	106.9 ՄՀց
4	«ՈՒԼԻՍ ՄԵԴԻԱ»ՍՊԸ	ք. Երևան	90.2 ՄՀց	90.1 ՄՀց

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵԹԵՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ  
 ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

h/h	Ընկերության անվանումը, հեռուստաձրագրի անվանումը	Միջոցի տարածքը	Լիցենզիայի համարը գործողության ժամկետը
<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ</b>			
1	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «Հ1 ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» ՀԾ	հանրապետական	-
2	«ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «ՇՈՂԱԿԱԹ» ՀԾ	հանրապետական	-
3	«ՍՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ «ԿԵՆՏՐՈՆ» ՀԾ	հանրապետական	N 151 20.01.2011թ. 20.01.2021թ.
4	«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ «h2» ՀԾ	հանրապետական	N 152 20.01.2011թ. 20.01.2021թ.
5	«ՇԱՆԹ» ՍՊԸ «ՇԱՆԹ» ՀԾ	հանրապետական	N 157 20.01.2011թ. 20.01.2021թ.
6	«ԱՐՄԵՆԻԱ ԹԻՎԻ» ՓԲԸ «ԱՐՄԵՆԻԱ» ՀԾ	հանրապետական	N 163 20.01.2011թ. 20.01.2021թ.
7	«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ «ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» ՀԾ	հանրապետական	N 164 20.01.2011թ. 20.01.2021թ.
8	«ԱՆՍՎԵՐ» ՍՊԸ «ԷՌ ՏԷ ԷՌ ՊԼԱՆԵՏԱ» (PTP планета) ՀԾ	հանրապետական	N 171 28.01.2011թ. 20.01.2021թ.
<b>Ք. ԵՐԵՎԱՆ</b>			
1	«ՄԻՐ» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի մասնաձյուղ «ՄԻՐ» ՀԾ	մայրաքաղաքային	-
2	«ԱՐ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	մայրաքաղաքային	N 148

	«Ա.Բ» ՀԾ		20.01.2011թ. 20.01.2021թ.
3	«ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲԸ «ԱՐՄՆՅՈՒԶ» ՀԾ	մայրաքաղաքային	N 153 20.01.2011թ. 20.01.2021թ.
4	«ՀՅ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «ՀՅ» ՀԾ	մայրաքաղաքին	N 156 20.01.2011թ. 20.01.2021թ.
5	«ՇԱՐԿ» ՍՊԸ «ԼԱՅՍ» ՀԾ	մայրաքաղաքային	N 160 20.01.2011թ. 20.01.2021թ.
6	«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ «ԴԱՐ-21» ՀԾ	մայրաքաղաքային	N 161 20.01.2011թ. 20.01.2021թ.
7	«ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ» ՍՊԸ «ՍԻ ԷՆ ԷՆ» (CNN) ՀԾ	մայրաքաղաքային	N 162 20.01.2011թ. 20.01.2021թ.
8	«Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ «Ա-ԹԻՎԻ» ՀԾ	մայրաքաղաքային	N 166 20.01.2011թ. 20.01.2021թ.
9	«ԿԱՅՍ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ «ՊԵՐՎԻՅ ԿԱՆԱԼ» (Первый канал) ՀԾ	մայրաքաղաքային	N 170 28.01.2011թ. 20.01.2021թ.
10	«ՊԱՐԱԴԻԶ» ՍՊԸ «ԿՈՒԼՏՈՒՐԱ» (Культура) ՀԾ	մայրաքաղաքային	N 172 28.01.2011թ. 20.01.2021թ.
<b>ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ</b>			
1	«ԵՐԵՎԱՆ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	ՀՀ Արագածոտնի մարզ	N 167 20.01.2011թ. 20.01.2021թ.
<b>ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ</b>			
1	«ՏԵԼԵԼԵՔՍ» ՍՊԸ «ԱՐԱՐԱՏ» ՀԾ	ՀՀ Արարատի մարզ	N 168 20.01.2011թ. 20.01.2021թ.
<b>ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ</b>			
1	«ՆՈՐ ԴԱՐ, ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄՅԱԿ» ՍՊԸ «ԼՈՒՅՍ» ՀԾ	ՀՀ Արմավիրի մարզ	N 158 20.01.2011թ. 20.01.2021թ.
2	«ԷԶՄԻԱԾԻՆ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ»	ք. Էջմիածին	N 43 12.04.2002 թ.

	ԱԿ <sup>2</sup> «ԱՎԵՏԻՍ» ՀԾ		01.07.2015 թ.
3	«ԹԵՎ» ՍՊԸ <sup>2</sup> «ՆՈՅ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԾ	ք. Արմավիր	N 47 18.04.2002 թ. 01.07.2015 թ.
4	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ «ԱԼՏ» ՀԾ	ք. Արմավիր	N 49 18.04.2002 թ. 01.07.2015 թ.
<b>ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ</b>			
1	«ԳԵՂԱՄԱ ՄԵՂԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ «ԳԵՂԱՄԱ» ՀԾ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	N 149 20.01.2011թ. 20.01.2021թ.
<b>ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶ</b>			
1	«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊԸ «ՖՈՐՏՈՒՆԱ» ՀԾ	ՀՀ Լոռու մարզ	N 150 20.01.2011թ. 20.01.2021թ.
2	«ԱՐՏԳԱՐ» ՍՊԸ <sup>2</sup> «Գ-ՐԴ ԱԼԻՔ» ՀԾ	ք. Վանաձոր	N 48 18.04.2002 թ. 01.07.2015 թ.
3	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ <sup>2</sup> «ՄԻԳ» ՀԾ	ք. Վանաձոր	N 58 03.07.2002 թ. 01.07.2015 թ.
4	«ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՍՊԸ <sup>2</sup> «ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3» ՀԾ	ք. Ալավերդի	N 79 25.10.2003 թ. 01.07.2015 թ.
5	«ԼՈՌԻ ԹԻՎԻ» ՍՊԸ <sup>2</sup> «ԼՈՌԻ» ՀԾ	ք. Վանաձոր	N 83 01.11.2003 թ. 01.07.2015 թ.
6	«ԱՆՆԱ ԵՎ ԿԱՐԵՆ» ՍՊԸ <sup>2</sup> «ՍԼԱՎ ՄԵՂԻԱ» ՀԾ	ք. Սպիտակ	N 97 22.02.2005 թ. 01.07.2015 թ.
<b>ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ</b>			
1	«ԱԲՈՎՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ «ԱԲՈՎՅԱՆ ԹԻՎԻ» ՀԾ	ՀՀ Կոտայքի մարզ	N 154 20.01.2011թ. 20.01.2021թ.
2	«ՆԱՐԵԿ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ <sup>2</sup> «ՆԱՐԵԿ» ՀԾ	ք. Աբովյան	N 62 16.12.2002 թ. 01.07.2015 թ.
3	«ԼՈՒՍԱԼԻՔ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ <sup>1</sup> «ԼՈՒՍԱԼԻՔ» ՀԾ	ք. Չարենցավան	N 66 04.07.2003 թ. 01.01.2015 թ.

4	«ՄԻՐԱԿ» ՍՊԸ <sup>2</sup> «ՀՐԱԶԴԴԱՆ ԹԻՎԻ» ՀԾ	ք. Հրազդան,	N 89 12.01.2004 թ. 01.07.2015 թ.
<b>ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ</b>			
1	«ՇԻՐԱԿԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱՂԻՈՒՄ» ՓԲԸ «Շ 1» ՀԾ	ՀՀ Շիրակի մարզ	–
2	«ՑԱՅԳ» ՍՊԸ «ՑԱՅԳ» ՀԾ	ՀՀ Շիրակի մարզ	N 165 20.01.2011թ. 20.01.2021թ.
3	«ՉԱՊ ՔԵՄԻՔԼ» ՍՊԸ <sup>2</sup> «ԳԱԼԱ» ՀԾ	ք. Գյումրի	N 98 23.02.2005թ. 01.07.2015թ.
<b>ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ</b>			
1	«ՉԱԳԵՁՈՐ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ «ՍՈՍԻ» ՀԾ	ՀՀ Սյունիքի մարզ	N 169 20.01.2011թ. 20.01.2021թ.
2	«ԼԱՍՏԻ ԽՈՒՏ» ՍՊԸ <sup>1</sup> «ԼԱՍՏ» ՀԾ	ք. Գորիս	N 73 06.10.2003 թ. 01.01.2015 թ.
3	«ՈՐՈՏԱՆՅԱՆ ՂՈՂԱՆՋՆԵՐ» ՍՊԸ <sup>1</sup> «ՍՅՈՒՆԻ» ՀԾ	ք. Միսիան	N 76 10.10.2003 թ. 01.01.2015 թ.
<b>ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ</b>			
-	–	–	–
<b>ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ</b>			
1	«ՏԱՎՈՒՇ-ՏՎ» ՍՊԸ «ՏԱՎՈՒՇ» ՀԾ	ՀՀ Տավուշի մարզ	N 159 20.01.2011 թ. 20.01.2021 թ.
2	«ՔԱՄՈՒՏ» ՍՊԸ <sup>2</sup> «ՔԱՄՈՒՏ» ՀԾ	ք. Նոյեմբերյան	N 81 01.11.2003 թ. 01.07.2015 թ.
3	«ԻՋԵՎԱՆ ՍՏՈՒԴԻԱ» ՍՊԸ <sup>2</sup> «ԻՋԵՎԱՆ ՍՏՈՒԴԻԱ» ՀԾ	ք. Իջևան	N 85 06.11.2003 թ. 01.07.2015 թ.

<sup>2</sup> Նշված անալոգային հեռարձակում իրականացնող ընկերությունների լիցենզիաների գործողության ժամկետը երկարաձգվել է օրենքով սահմանված կարգով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ)  
 ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

h/h	Ընկերության անվանումը հեռուստաձրագրի անվանումը	Սփռման տարածքը	Լիցենզիայի համարը և գործողության ժամկետը
<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ</b>			
1	«ՎԻԳԵԴՈ» ՓԲԸ	հանրապետական	N131 18.12.2007թ. 18.12.2017թ.
2	«ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ	հանրապետական	N144 23.10.2010թ. 23.10.2020թ.
3	«ՅՈՒՔՈՍ» ՍՊԸ	հանրապետական	N186 16.10.2012թ. 16.10.2022թ.
4	«ՔՐՈՍՍ ՀԻԹԵՔ» ՍՊԸ	հանրապետական	N187 06.11.2012թ. 06.11.2022թ.
5	«ԷՍ ՊԵ ԲԵ ԹԻ ՎԻ» ՍՊԸ	հանրապետական	N192 17.08.2013թ. 17.08.2023թ.
6	«ԱՐԱՅ» ՍՊԸ	ք. Երևան, Սյունիքի մարզ	N 188 18.12.2012թ. 18.12.2022թ.
7	«ՆՈՐ ՆՈՐՔ ԿԱԲԵԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Երևան, Արարատի մարզ, Կոտայքի մարզ	N195 15.04.2014թ. 15.04.2024թ.
<b>Ք. ԵՐԵՎԱՆ</b>			

1	«ՏԵԼԵՊՈՐՏ» ՍՊԸ	ք. Երևան	N 106 13.07.2005թ. 13.07.2015թ.
2	«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան	N 121 05.09.2006թ. 05.09.2016թ.
3	«ԱՐՎԵՍՏԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍ» ՍՊԸ	ք. Երևան	N129 16.11.2007թ. 16.11.2017թ.
4	«ԺԱՄԱՐՏԵ» ՍՊԸ	ք. Երևան	N134 02.06.2009թ. 02.06.2019թ.
5	«ԱՐԹՈՏԵՔՍ» ՍՊԸ	ք. Երևան	N137 20.03.2010թ. 20.03.2020թ.
6	«ՄԵՓԱԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան	N140 26.05.2010թ. 26.05.2020թ.
7	«ԿԱՅԾ ԼԱՅՆ» ՍՊԸ	ք. Երևան	N141 26.05.2010թ. 26.05.2020թ.
8	«ՆԱՏՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	N142 01.10.2010թ. 01.10.2020թ.
9	«ՍՈՒԼՏԻ ՔԱՍՏ» ՍՊԸ	ք. Երևան	N146 23.12.2010թ. 23.12.2020թ.
10	«ԲԵՏԱ-ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Երևան	N173 16.03.2011թ. 16.03.2021թ.
11	«ՀՈՎՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	N174 10.06.2011թ. 10.06.2021թ.
12	«ՄԱՐԻՆԿԱ» ՍՊԸ	ք. Երևան	N179 01.09.2011թ. 01.09.2021թ.
13	«ՍԹՐԻՄՁՈՆ» ՍՊԸ	ք. Երևան	N180 20.12.2011թ. 20.12.2021թ.
14	«ԹԻՎԻՆԵՏ» ՍՊԸ	ք. Երևան	N184 15.06.2012թ. 15.06.2022թ.

15	«ԷՅ-ԱՓ» ՓԲԸ	ք. Երևան,	N 185 16.06.2012 թ. 16.06.2022 թ.
<b>ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՄԱՐԶԵՐ</b>			
1	«ՊՐՈՂԻԶԱՅՆ» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ, ՀՀ Կոտայքի մարզ	N194 11.01.2014թ. 11.01.2024թ.
2	«ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Արմավիրի, Արագածոտնի և Շիրակի մարզեր	N200 25.12.2014թ. 25.12.2024թ.
<b>ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ</b>			
1	«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊԸ	ք. Աշտարակ	N147 23.12.2010թ. 23.12.2020թ.
<b>ՀՀ ԱՐԱՐԱՍԻ ՄԱՐԶ</b>			
1	«ԱՐՏ-ԹԻՎԻ-ՆԵԹ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ	N183 22.05.2012թ. 22.05.2022թ.
2	«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ	ք. Մասիս, ք. Արտաշատ, ք. Վեդի, ք. Արարատ	N181 31.01.2012թ. 31.01.2022թ.
3	«ԱՐԼՈՔՆԵԹ» ՍՊԸ	ք. Արարատ	N132 04.03.2009թ. 04.03.2019թ.
4	«ԴԻՋԻ ԹՎ» ՍՊԸ	ք. Մասիս	N178 09.08.2011թ. 09.08.2021թ.
<b>ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ</b>			
1	«ԹԵՎ» ՍՊԸ	ք. Արմավիր, ք. Մեծամոր	N130 20.11.2007թ. 20.11.2017թ.
2	«ԱԼՏ» ՀԵՌՈՒՄՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Արմավիր	N138 23.03.2010թ. 23.03.2020թ.
<b>ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ</b>			
1	«ՄԱՐՏՈՒՆԻ ՏՎ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ	N 189 28.12.2012թ. 28.12.2022թ.
2	«ՍԱՄՈՒ-ՏՎ» ՍՊԸ	ք. Սևան	N126 27.09.2007թ. 27.09.2017թ.

3	«ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆ» ՍՊԸ	ք. Ճամբարակ	N133 07.04.2009թ. 07.04.2019թ.
4	«ՔՅԱՎԱՌԻ ՀՈՒՅՍ» ՍՊԸ	ք. Գավառ	N136 22.12.2009թ. 22.12.2019թ.
<b>ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ</b>			
1	«ԴԻԼԱՐՄ» ՍՊԸ	ք. Վանաձոր	N 109 08.11.2005թ. 08.11.2015թ.
2	«Ց.Ա.Ա.Ա.Է.» ՍՊԸ	ք. Վանաձոր	N 112 04.04.2006թ. 04.04.2016թ.
3	«ՍՊԱՅԴԵՐ ՍԻՍՏԵՄ» ՍՊԸ	ք. Վանաձոր	N145 23.12.2010թ. 23.12.2020թ.
<b>ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ</b>			
1	«ԲԱԳԵՏ» ՍՊԸ	ք. Նոր Հաճրն	N 118 08.07.2006թ. 08.07.2016թ.
2	«ՀԵՌԱՏԵՄ» ՍՊԸ	ք. Հրազդան	N125 02.08.2007թ. 02.08.2017թ.
3	«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊԸ	ք. Չարենցավան	N128 15.11.2007թ. 15.11.2017թ.
4	«ՀԱՃԸՆ ԻՍՊ» ՍՊԸ	ք. Նոր Հաճրն	N176 09.07.2011թ. 09.07.2021թ.
5	«ՊԼԱՆԵՏ ԲԱՖՖԻ» ՍՊԸ	ք. Եղվարդ	N177 04.08.2011թ. 04.08.2021թ.
6	«ՍԱՄՎԵԼ-ՄԵԼԻՆԵ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N197 20.08.2014թ. 20.08.2024թ.
7	«ՍՄԱՅԼ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ	ՀՀ Կոտայքի մարզ	N198 06.09.2014 թ. 06.09.2024 թ.
<b>ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ</b>			
1	«ԴԱՅԱՆԱՆԵՏ» ՍՊԸ	ՀՀ Շիրակի մարզ	N182 18.05.2012թ. 18.05.2022թ.

2	«ՏԵԼԵՄԱՔՍ ՏԻՎԻ» ՍՊԸ	ք. Գյումրի	N122 01.08.2007թ. 01.08.2017թ.
3	«ՀԱՅԿ-ՄԵԴԻԱ» ՍՊԸ	ք. Գյումրի, ք. Արթիկ	N175 09.07.2011թ. 09.07.2021թ.
4	«ՖԼԱՅ ՏՎ» ՍՊԸ	ք. Գյումրի	N196 01.06.2014թ. 01.06.2024թ.
<b>ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ</b>			
1	«ԱԳԱՐԱԿ-ՏՎ» ՍՊԸ	ք. Մեղրի, ք. Ագարակ	N 103 23.03.2005թ. 23.03.2015թ.
2	«ԱՆԳԵՂ-ՏՎ» ՍՊԸ	ք. Սիսիան	N 111 28.12.2005թ. 28.12.2015թ.
3	«ԽՈՅԼՈՒՆՑՆԵՐ» ՍՊԸ	ք. Գորիս	N 119 08.07.2006թ. 08.07.2016թ.
4	«ԽՈՒՍՏՈՒՓ ԹԻՎԻ» ՍՊԸ	ք. Կապան	N 199 09.10.2014թ. 09.10.2024թ.
<b>ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ</b>			
–	–	–	–
<b>ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ</b>			
1	«ԱՅՐՈՒՄ ԹԻՎԻ» ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ	ք. Այրում	N127 29.09.2007թ. 29.09.2017թ.

*Հավելված 6*  
*Հեռուստատեսության և ռադիոյի ազգային*  
*հանձնաժողովի 2014 թվականի հաղորդման*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ  
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

h/h	Ընկերության անվանումը ռադիոկայանի անվանումը	Սփռման տարածքը	Լիցենզիայի համարը գործողության ժամկետը
<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ</b>			
1	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ Հանրային ռադիոյի առաջին ծրագիր «ԱՌԱՋԻՆ ԾՐԱԳԻՐ» ռադիոկայան	ք. Երևան, մարզեր	-
<b>Ք. ԵՐԵՎԱՆ</b>			
1	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ Հանրային ռադիոյի երկրորդ ծրագիր «ԻՍ ՌԱԴԻՈ» ռադիոկայան	ք. Երևան	-
2	«ՎԷՄ ՍՓԻՈՒՌ» ՍՊԸ «ՎԷՄ» ռադիոկայան	ք. Երևան	-
3	«ՖՄ-102.4» ֆրանսիական ծրագիր	ք. Երևան	-
4	«ԱՐՁԱԳԱՆՔ ՍՏ.» ՍՊԸ «ԱՐՁԱԳԱՆՔ» ռադիոկայան	ք. Երևան	N 42 12.04.2002թ. 20.07.2016թ.
5	«ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊԸ «ԼԱՎ ՌԱԴԻՈ» ռադիոկայան	ք. Երևան	N 50 22.04.2002թ. 20.07.2016թ.
6	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՅԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ «ԵՐԵՎԱՆ» ռադիոկայան	ք. Երևան	N 51 22.04.2002թ. 20.07.2016թ.
7	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ռադիոկայան	ք. Երևան	N 52 22.04.2002թ. 20.07.2016թ.
8	«ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ «ՎԱՆ» ռադիոկայան	ք. Երևան	N 55 30.04.2002թ. 20.07.2016թ.
9	«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ » ՓԲԸ «ՍԻԹԻ ՖՄ» ռադիոկայան	ք. Երևան	N 56 03.07.2002թ. 20.07.2016թ.
10	«ՖՄ-105.5» ՍՊԸ «ՀԱՅ ՖՄ» ռադիոկայան	ք. Երևան	N 61 16.12.2002թ. 20.07.2016թ.

11	«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ «ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ» (Русское радио) ռադիոկայան	ք. Երևան	N 72 09.10.2003թ. 20.07.2016թ.
12	«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊԸ «ԻՄՊՈՒԼՍ» ռադիոկայան	ք. Երևան	N 92 20.07.2004թ. 20.07.2016թ.
13	«ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ռադիոկայան	ք. Երևան	N 95 19.02.2005թ. 20.07.2016թ.
14	«ԱՎՏՈՌԱԴԻՈ» ՍՊԸ «ԱՎՏՈՌԱԴԻՈ» ռադիոկայան	ք. Երևան	N 101 26.02.2005թ. 20.07.2016թ.
15	«ՌԱԴԻՈ ՊՌՈ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ԶԱՆ» ռադիոկայան	ք. Երևան	N 116 06.06.2006թ. 20.07.2016թ.
16	«ՈՒԼԻՍ ՄԵԴԻԱ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ՇԱՆՍՈՆ» ռադիոկայան	ք. Երևան	N 117 06.06.2006թ. 20.07.2016թ.
<b>ՄԵԿՑ ԱՎԵԼԻ ՄԱՐԶԵՐ</b>			
1	«ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ռադիոկայան	մարզեր	N 99 24.02.2005թ. 20.07.2016թ.
2	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻԶՄԱՅՐՅԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ «ԵՐԵՎԱՆ» ռադիոկայան	մարզեր	N 100 26.02.2005 թ. 20.07.2016 թ.
3	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻԶՄԱՅՐՅԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ «ԵՐԵՎԱՆ» ռադիոկայան	մարզեր	N 108 23.09.2005 թ. 20.07.2016թ.
<b>ՄԵԿ ՄԱՐԶ</b>			
1	«ՇԻՐԱԿԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ» ՓԲԸ Շիրակի հանրային ռադիո	ՀՀ Շիրակի մարզ	–
2	«ՇԱՆԹ» ՍՊԸ «ՇԱՆԹ» ռադիոկայան	ք. Գյումրի	N 65 04.07.2003թ. 20.07.2016թ.
3	«ԼՈՌՈՒ ՄԻԳ» ՍՊԸ «ԻՆՏԵՐԿԱՊ» ռադիոկայան	ք. Վանաձոր	N 87 16.12.2003թ. 20.07.2016թ.
4	«ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻԶՄԱՅՐՅԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊԸ «ԵՐԵՎԱՆ» ռադիոկայան	ք. Ծաղկահովիտ	N 110 18.11.2005թ. 20.07.2016թ.